**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1**
**N ԳՀԱՊՁԲ-20-9/15-2 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

ք. Երևան 21.05.2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչության պետ Ն.Յոլյանի, ով գործում է ՀՀ պաշտպանության նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «ՄԻ ՎՆԱՍԻՐ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Լ.Գրիգորյանցի, ով գործում է «ՄԻ ՎՆԱՍԻՐ» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով 30.12.2019թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-20-9/15-2 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.15 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը (ֆինանսական միջոցները նախատեսվել են 26.12.2019թ. ՀՀ կառավարության N1919-Ն որոշմամբ հաստատված 2020թ.-ին պետության կարիքների համար իրականացվող գնումների պլանում), փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով ապրանքների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված N 1-ի և Հավելված N 2-ի:

1.2 Վաճառողը պարտավորվում է Գնորդի հանձնարարությամբ մատակարարել Պայմանագրի Հավելված N 1-ով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին համապատասխան ապրանք՝ Համաձայնագրի Հավելված N 1-ով սահմանված գնման ժամանակացույցով նախատեսված ծավալներով և ժամկետներում, իսկ Գնորդն պարտավորվում է ընդունել այդ ապրանքը և վճարել դրա համար՝ Համաձայնագրի Հավելված N 2-ով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ժամկետներում:

## 2. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1 Համաձայնագրով Վաճառողի մատակարարման ենթակա ապրանքների ընդհանուր գինը կազմում է **5 454 000/հինգ միլիոն չորս հարյուր հիսունչորս հազար ՀՀ դրամ:**

Գինը ներառում է Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները: Ապրանքների մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդն նվազեցնելու այդ գինը:

2.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքների դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա, այն ստորագրելուց հետո 15 բանկային օրվա ընթացքում՝ Համաձայանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 10-ը:

## 3. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

3.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի սույն Համաձայնագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

3.2 Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով նախատեսված մյուս դրույթները թողնվում են անփոփոխ:

3.3 Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.4 Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի N 1 և N 2 Հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկ օրինակ:

3.5 Համաձայնագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչությունը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ ՌԲ վարչությունը:

## 4. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «ՄԻ ՎՆԱՍԻՐ» ՍՊԸ |
| ք. Երևան, Բագրևանդի 5 | ք.Երևան, Րաֆֆու 99/42 |
| ՀՀ ՖՆ ԱԳ գործառնական վարչություն | «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011144129 | Հ/Հ 1570021916560100 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 01847238 |
| ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ | Տնօրեն՝ |
| Ն. ՅՈԼՅԱՆ | Լ.ԳՐԻԳՈՐՅԱՆՑ |

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-20-9/15-2 պայմանագրի
N 1 Համաձայնագրի

: ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հ/հ | CPV | անվանումը և ապրանքային նշանը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | | |
| | | | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | | |
| | | | | | | | | | | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 30.10.2020թ. |
| 1 | 33141226/509 | Կենտրոնական երակային կաթետեր եռլուսանցքանի BALTON | BALTON | Կաթետերի երկարությունը 20սմ, լայնությունը 7Fr, լուսանցքները 16G.18G.18G,պունկցիոն ասեղը 18G, 7սմ, պարունակում է դիլատատոր, J-ուղղորդիչ 60սմ, նշտար, Y կոննեկտոր, կաթետերի սեղմիչ, ֆիքսատոր, ներարկման փականներ: | լրակազմ | 10800 | 1620000 | 150.0 | ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա | 0 | 75.0 | 75.0 |
| 2 | 33171100/544 | Պերֆուզորի գիծ 150սմ BALTON | BALTON | ՊՎՔ-ից պատրաստված, լուեր լոք ծայրով խողովակ 150սմ երկարությամբ, թափանցիկ: | հատ | 310 | 465000 | 1,500.0 | ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա | 0 | 0 | 1500.0 |
| 3 | 33171100/546 | Սպինալ անզգայացման ասեղ 25G 150մմ, ուղղորդիչով Sprotte | PAJUNK | Սպինալ անզգայացման ասեղ 25G ուղղորդիչով, կողմնային անցքը Sprotte տիպի, երկ-150մմ, սմ-ային սանդղակով, տրամագիծը-0.5մմ, ինտրադյուսերը 0.8մմ: | հատ | 3000 | 180000 | 60.0 | ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա | 0 | 60.0 | 0 |
| 4 | 33171100/547 | Սպինալ անզգայացման ասեղ 25G 120մմ, ուղղորդիչով Sprotte | PAJUNK | Սպինալ անզգայացման ասեղ 25G ուղղորդիչով, կողմնային անցքը Sprotte տիպի, երկ-120մմ, սմ-ային սանդղակով, տրամագիծը-0.5մմ, ինտրադյուսերը 0.8մմ: | հատ | 3000 | 180000 | 60.0 | ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա | 0 | 60.0 | 0 |
| 5 | 33171100/548 | Սպինալ անզգայացման ասեղ 29G 90մմ, ուղղորդիչով Sprotte | PAJUNK | Սպինալ անզգայացման ասեղ 29G ուղղորդիչով, կողմնային անցքը Sprotte տիպի, երկ-90մմ, տրամագիծը-0.33մմ: | հատ | 3900 | 234000 | 60.0 | ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա | 0 | 0 | 60.0 |
| 6 | 33171100/549 | Էպիդուրալ անզգայացման ասեղ Տուոհի տիպի 18G 150մմ PAJUNK | PAJUNK | Տուոհի տիպի էպիդուրալ ասեղ չափսը 18G-1.2մմ,երկարությունը 150 մմ, սմ-ային սանդղակով, պողպատե ստիլետով: | հատ | 3500 | 105000 | 30.0 | ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա | 0 | 30.0 | 0 |
| 7 | 33171100/551 | Սպինալ անզգայացման ասեղ 25G 90մմ ուղղորդիչով Sprotte | PAJUNK | Սպինալ անզգայացման ասեղ 25G ուղղորդիչով, կողմնային անցքը Sprotte տիպի երկ-90մմ տրամագիծը-0.5մմ, ինտրադյուսերը 0.8մմ: | հատ | 2600 | 1170000 | 450.0 | ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա | 0 | 450.0 | 0 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 8 | 33141182/563 | Գաստրո-լարինգեալ խողովակ մեծի VBM | VBM | Նախատեսված է էնդոսկոպիկ միջամտությունների ժամանակ հիվանդի օժանդակող շնչառության համար: Ունի լայն ուղիղ անցք միջամտությունների համար, կողմնային խողովակ՝ շնչառության համար, երկու մանժետ: Չափսը 155սմ հասակից ավել: | հատ | 123000 | 1230000 | 10.0 | ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա | 10.0 | 0 | 0 |
| 9 | 33171100/553 | Տրախեոստոմիկ փողի ֆիքսատոր մեծ VBM | VBM | Տրախեոստոմիկ փողի ֆիքսատոր փափուկ, չկտրվող, առանձին փաթեթավորումով: | հատ | 1500 | 270000 | 180.0 | ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա | 180.0 | 0 | 0 |

**Ապրանքները պետք է ունենան.**

1.Եվրամիության երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/ կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները):

2. Արտադրողի միջազգային հավաստագրի /ISO, GMP, EC կամ այլ/ և /կամ/ արտադրող պետության կողմից տրված արտադրության անվտանգության և որակի վերահսկման հավաստագրի պատճեն:

3. Արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի)՝ կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և (կամ) որակի հավաստագիրը:

**թիվ 1,2,3 կետերով պահանջվող հավաստագրերի պատճենները ներկայացվում են ապրանքների մատակարարման ժամանակ:*

4.Պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների դեպքում՝ապրանքատեսակները հանձնման պահին պետք է ունենան առնվազն պիտանելիության ժամկետի 1/2-ը:

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԵ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈՒԼՉՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«ՄԻ ՎՆԱՍԻՐ» ՍՊԸ-ի տնօրեն

Լ.ԳՐԻԳՈՐՅԱՆՑ

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-20-9/15-2 պայմանագրի
N 1 Համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Հ/հ | CPV | անվանումը | Ապրանքների դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ.-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝ | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 10-ը |
| 1 | 33141226/509 | Կենտրոնական երակային կաթետեր եռլուսանցքանի | 0 | 0 | 810000 | 810000 | 810000 | 1620000 | 1620000 | 1620000 |
| 2 | 33171100/544 | Պերֆուզորի գիծ 150սմ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 465000 | 465000 | 465000 |
| 3 | 33171100/546 | Սպինալ անզգայացման ասեղ 25G 150մմ, ուղղորդիչով | 0 | 0 | 180000 | 180000 | 180000 | 180000 | 180000 | 180000 |
| 4 | 33171100/547 | Սպինալ անզգայացման ասեղ 25G 120մմ, ուղղորդիչով | 0 | 0 | 180000 | 180000 | 180000 | 180000 | 180000 | 180000 |
| 5 | 33171100/548 | Սպինալ անզգայացման ասեղ 29G 90մմ, ուղղորդիչով | 0 | 0 | 0 | 0 | 0 | 234000 | 234000 | 234000 |
| 6 | 33171100/549 | Էպիդուրալ անզգայացման ասեղ Տուոհի տիպի 18G 150մմ | 0 | 0 | 105000 | 105000 | 105000 | 105000 | 105000 | 105000 |
| 7 | 33171100/551 | Սպինալ անզգայացման ասեղ 25G 90մմ ուղղորդիչով | 0 | 0 | 1170000 | 1170000 | 1170000 | 1170000 | 1170000 | 1170000 |
| 8 | 33141182/563 | Գաստրո-լարինգեալ խողովակ մեծի | 1230000 | 1230000 | 1230000 | 1230000 | 1230000 | 1230000 | 1230000 | 1230000 |
| 9 | 33171100/553 | Տրախեոստոմիկ փողի ֆիքսատոր մեծ | 270000 | 270000 | 270000 | 270000 | 270000 | 270000 | 270000 | 270000 |

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ գնումների վարչության պետ

Լ. ՑՈՒԼՉՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«ՄԻ ՎՆԱՍԻՐ» ՍՊԸ-ի տնօրեն

Լ.ԳՐԻԳՈՐՅԱՆՑ